ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/6874-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-755-27.12.2023-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը»:

2. Միջազգային շուկայում տեղի ունեցող գնային փոփոխություններին առավել ճկուն արձագանքելու նպատակով շահագրգիռ պետական մարմինների հետ դիտարկվել են նախագծով առաջարկվող պետական տուրքի դրույքաչափերը, որի հիման վրա նպատակահարմար է գտնվել ճշգրտել պետական տուրքի չափը՝ այն նվազեցնելու տեսանկյունից:

Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի ցանկի 2-րդ սյունակի՝ 200, 100 և 115 թվերը փոխարինել համապատասխանաբար՝ 180, 90 և 105 թվերով:

3. Հաշվի առնելով, որ Ազգային Ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (Կ-659-05.09.2023-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը, որով կատարվել են լրացումներ նույն՝ 19.6-րդ հոդվածում (ավելացվել են 7-11-րդ մասեր)՝ առաջարկում ենք սույն Նախագծում փոխել նաև նույն հոդվածում լրացվող մասերի համարակալումը, ինչպես նաև՝ համապատասխանեցնել 2-րդ հոդվածի թվերը:

Ըստ այդմ Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք 7-9-րդ մասերի

համարակալումը փոխարինել՝ 12-14 մասերով, ինչպես նաև 2-րդ հոդվածի «2-6-րդ» թվերը՝ «2-14-րդ» թվերով:

4. Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:

5. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:

6. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 252-Լ որոշմամբ սահմանված աշխատակարգը, որտեղ նախատեսված են Նախագծի շրջանառության առավելագույն ժամկետները, առաջարկում ենք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետ սահմանել երկու ամիս:

Ըստ այդմ Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք «մեկամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ